

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոյեմբերի 24-ին մերձմուսկովյան Դուբնա քաղաքում գիտական կարևոր միջոցառում էր, որի նպատակն էր համակարգել ԱՊՀ երկրների ինովացիոն գործունեությունը: ԱՊՀ երկրների շրջանակներում ստեղծվել է մի կառույց, որը զբաղվելու է ինովացիոն ծրագրերի և գիտական արդյունքների առևտրայնացման հարցերով: Այս նախաձեռնությունն ինքնին ողջունելի է: Առավել ևս ողջունելի է, որ դրան մասնակցելու է նաև մեր երկիրը: Միջոցառմանը մասնակցում էր նաև ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանը: Վերջինի հետ զրույցում ծանոթացա ծրագրի մանրամասներին:

- Պարոն Հարությունյան, ծրագրում ներկայացված ԱՊՀ երկրներն ինչի՞ն են պարտական նման գաղափարի ծագման համար:

- Հետխորհրդային շրջանում մեր երկրները հայտնվեցին թե՛ ֆինանսական, թե՛ տնտեսական կոլապսի մեջ, և շատ պետություններում հետազոտությունները կարծես ինքնանպատակ, իներցիոն գործընթացի էին նմանվում: Իսկ գիտական հետազոտությունը չի կարող լինել այդպիսին: Իհարկե, կա ֆունդամենտալ գիտություն, որը պարտավոր է ունենալ ցանկացած պետություն, քանի որ հենց դա է ցույց տալիս այդ պետության դեմքը, կրթության մակարդակը, ժողովրդի ընդհանուր գիտա-կրթական մակարդակն ու մի շարք այլ կարևոր գործոններ: Բայց կա նաև այսպես կոչված կիրառական գիտություն, որը նպատակ ունի զարգացնել ոչ միայն ֆունդամենտալ գիտությունը, այլև տնտեսությունը: Հետխորհրդային երկրները կիրառական գիտության արդյունքների օգտագործման փորձ չունեին, քանի որ մինչև օրս էլ զբաղվում է մենեջմենթի պակասը, չէ՞ որ գիտնականի գործն է գիտական, այլ ոչ թե ֆինանսատնտեսական խնդիրների լուծումը: Այդ տեսանկյունից առանձին ԱՊՀ բոլոր երկրներում գիտական արդյունքների առևտրայնացման խնդիրը նույն մակարդակի վրա է՝ մակարդակ գրեթե չկա: Իսկ որպեսզի գիտական արդյունքն օգտագործես, պետք է ունենաս զարգացած տնտեսություն, զարգացած փոքր և միջին բիզնես եվ այլ ատրիբուտներ:

- Որը մենք չունենք:

- Այո ու, ցավոք, մեր երկրներից ոչ մեկը, այդ թվում և Ռուսաստանը, նման փորձ չունենք: Ինչպե՞ս էր դա արվում այն տարիներին: Խորհրդային Միությունն ուներ ռազմարդյունաբերական հզոր համալիր, որը և հիմնական պատվիրատուն էր: Գիտնականը դա իրականացնում էր, շատ հաճախ առանց մտածելու դրանց կիրառական հետևանքների մասին: Հայաստանի անկախության պարագայում դա լրիվ դառնում է հիմնականում մեր պետության և տնտեսության առանձին ճյուղերի խնդիրը: Որպեսզի փոքր երկրները կարողանան իրենց գիտական արդյունքը կիրառել, պետք է շուկա ունենան, իսկ մեր երկրների շուկաները փոքր են, քանի որ հզոր տնտեսություն չունեն: Եվ առաջնահերթ է դառնում արդյունքի իրացնել դրսի շուկայում, ինչը, իհարկե, դժվար է, քանի որ մեր երկրների նկատմամբ վստահություն առաժմ չկա՝ բավականին թերի զարգացած գիտական և տնտեսական ինֆրաստրուկտուրաների պատճառով: Սա նշանակում է, որ դրսի շուկան մտնելը բարդ խնդիր է: Այդ իսկ պատճառով կառույցը, որ ստեղծվեց, հետապնդում է մի նպատակ՝ ԱՊՀ երկրների շուկաներն օգտագործելու հնարավորություն:

- Եվ ի՞նչ նախադրյալներ են անհրաժեշտ այդ նպատակն իրագործելու համար:
- Նախ և առաջ, ԱՊՀ բոլոր այդ երկրները ԽՍՀՄ-ի մաս են եղել, հետևաբար մեր գիտակրթական կապերը պահպանվում են, բացի այդ, հեշտանում է երկկողմ շփումը, քանի որ մեր օրենսդրական դաշտն ունի որոշակի նմանություններ, կրթական ավանդույթներն են նման իրար և այլն: Այսինքն՝ հաղորդակցության իմաստով որևէ խնդիր առաջանալ չի կարող: Նման կառույցի ստեղծումը հետապնդում է նաև այլ նպատակ՝ օգտագործել ԱՊՀ երկրների ընդհանուր շուկան:
- Ո՞ր երկրներն են կառույցում ներկայացված լինելու:
- Հայաստանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Բելառուսը, Ղազախստանն ու Տաջիկստանը: Ռուսաստանի նախաձեռնությամբ որոշում կայացվեց ինովացիոն գործունեությունն իրականացնելու միացյալ կառույց և ընդհանուր ֆոնդ ստեղծել, որը կաջակցի գիտական արդյունքներին: Որոշում էր կայացվել նաև, որ ԱՊՀ որոշ երկրներում՝ Հայաստանում, Ղազախստանում, Մոլդովայում, ինչպես նաև Գերմանիայում, ստեղծվեն ինովացիոն կենտրոններ: Նոյեմբերի վերջին Դուբնայում տեղի ունեցած միջոցառման ժամանակ քննարկվեց, թե ի՞նչ ձևով դա պետք է լուծվի: Այդ աշխատանքները համակարգելու նպատակով ձևավորվեց աշխատանքային խումբ, որն էլ զբաղվելու է համապատասխան փաստաթղթային բազայի մշակմամբ: Այդ փաստաթուղթը շատ կարևոր է, քանի որ ամեն պետությունն ունի միջազգային և տարածաշրջանային պարտավորվածություններ: Այս բոլորը պետք է հաշվի առնվեն: Բացի այս, որպեսզի այս ամենը սկսի աշխատել, անհրաժեշտ է պիլոտային ծրագիր գործարկել ինչ-որ երկրում: Նպատակն է՝ տեսնել տվյալ երկրում արդյո՞ք դա կաշխատի, և եթե այո, ապա հաշվի առնելով ստացված արդյունքները՝ դրական թե բացասական, հաջորդ ծրագրերը, որոնք կիրականացվեն այլ երկրներում, դրանց վրա հիմնված կլինեն: Ի պատիվ մեզ, նշեմ, որ Հայաստանն ընտրվեց որպես համար մեկ պիլոտային երկիր և դեկտեմբերի 11-ին Երևանում կստեղծվի հայ-ռուսական ինովացիոն կենտրոն:
- Ինչո՞ւ հենց Հայաստանը:
- Պատճառները շատ են, բայց, կարծում եմ, կարևորվել է այն հանգամանքը, որ հազար բնակչին ընկնող գիտնականների թվով Հայաստանը բավականին լավ դիրք ունի ԱՊՀ երկրների շարքում...
- Մակայն դրա հետ մեկտեղ մեր գիտությունը բավականին կաղում է, և պատճառները շատ են՝ նվազագույն ֆինանսավորում, ժամանակակից չափանիշներին համապատասխան սարքավորումների բացակայություն և այլն:
- Ճիշտ եք ասում, բայց ամեն ինչ համեմատության մեջ է: Իհարկե, եթե համեմատենք խորհրդային տարիների հետ, ասվածի հետ համաձայն եմ: Բայց եթե համեմատենք ԱՊՀ այլ երկրների հետ, կտեսնենք, որ վիճակն էապես չի տարբերվում, իսկ որոշ չափանիշներով մենք նույնիսկ առաջ ենք: Օրինակ, 1994-2008 թթ. տպագրված աշխատանքների թվով Հայաստանն առաջ է ԱՊՀ շատ երկրներից, օրինակ՝ մեր հարևաններ Վրաստանից ու Ադրբեջանից, նույնիսկ Բելառուսից ենք առաջ:
- Հետաքրքիր է...
- Ուրիշ հարց է, որ մեր տնտեսությունը դեռ այն վիճակում չէ, որ կարողանա այս արդյունքները լավ օգտագործել և ինովացիոն կենտրոնների ստեղծման նպատակներից մեկը, կրկնում եմ, այն է, որ մեր նման երկրները շուկա գտնեն դրսում:
- Պարոն Հարությունյան, ո՞րն է այս ամենում Դուբնայի մասնակցությունը:
- Դուբնան լինելու է ակտիվ մասնակից: Նրա դերը կարևորվում է նրանով, որ Միջուկային հետազոտությունների միացյալ կենտրոնը միջազգային մեծ փորձ ունի: Եվ

այդ փորձը շատ կարևոր է ինովացիոն կառույցների համար: Բացի այդ, Դուբնայի շրջակայքում ստեղծվում է ազատ տնտեսական գոտի, որտեղ ինովացիոն բազմաբնույթ խնդիրները պետք է բարձր մակարդակով լուծվեն: Արդեն իսկ ավելի քան 60 տարբեր ու ճանաչված ընկերություններ (Microsoft, Nokia) գրասենյակներ ունեն այդտեղ: Այնպես որ, անկասկած, ինովացիոն կենտրոնի աշխատանքներում Դուբնայի դերակատարումը բավականին մեծ է լինելու:

Բացի այս, կներկայացվեն նաև առաջին ծրագրերը և հունվարից Հայաստանում կգործեն ինովացիոն խնդիրներին նվիրված երկշաբաթյա դպրոցներ, երիտասարդ գիտնականներին կծանոթացնենք ինովացիոն ծրագրերի բոլոր նրբություններին և այլն: Ի դեպ, կան արդեն ծրագրեր, որոնք կքննարկվեն առաջիկայում ու ֆինանսավորման հնարավորություն կստանան:

- Ի՞նչ տեսակի ֆինանսավորման մասին է խոսքը, կենտրոնի ֆինանսավորումը իրականացվելու է պետական միջոցներով:

- Հայաստանի նման փոքր երկրների մասնաբաժինը փոքր է լինելու: Օրինակ, Դուբնայում լսեցի, որ Հայաստանում պիլոտային ծրագրի իրականացման համար Ռուսաստանն արդեն 100 մլն ռուբլի է տրամադրել: Բնական է, մենք ևս որոշակի մասնակցություն կունենանք, ճիշտ է, դժվարանում եմ կոնկրետ ասել, բայց խոսքը, կարծեմ, 10 տոկոսի մասին է: Իսկ արդյունքը համատեղ օգտագործման՝ անկախ նրանից, թե որքան է մեր մասնաբաժինը լինելու: Ամենայն հավանականությամբ, այդ գումարների մի մասը կօգտագործվի որպես ռիսկային ֆոնդ:

- Այսի՞նքն:

- Կան ծրագրեր, որոնք շատ լավ գաղափար են պարունակում, բայց մինչև գաղափարը գիտական արդյունք դառնա, որոշակի ժամանակ ու փուլ պետք է անցնի: Հետազոտական փուլն ապահովելու համար ստեղծվում են ռիսկային ֆոնդեր, որոնք էլ ապահովում են ծրագրերը: Եվ դրանից հետո նոր բիզնես-ծրագիր է կազմվում, որը ներկայացվում է շահագրգիռ ընկերություններին: Այնպես որ, ենթադրում եմ, թե ապագայում, ամենայն հավանականությամբ, կստեղծվեն նման համատեղ ֆոնդեր, որոնք կֆինանսավորեն ինովացիոն բնույթի գիտատար աշխատանքները:

ԼԻԱ ԽՈՋՈՅԱՆ